

նուէր կ'ըլլային : Այդպիսիներն իւրեանց երկրորդ քաղաքական ընթացից մէջ մեծա-
մեծ գործոց ձեռնարկելով, անվեհեր արիւ-
թեամբ և անյողզող յարատեւութեամբ ի
գլուխ հանեցին և յոյժ օգտակար գտան աշ-
խարհի : Դոցա կարգէն են յսկերեան և
Մեսրոպ :

Լեոնային կեանքը Եղիշէի ալ հանգար-
տութիւն բերաւ. երբ արդէն շարադրած եօթն
յեղանակաց վրայ՝ տասներկու տարի ետքը՝
ուժերորդ մը աւելցնել ուզեց, միաբը և
սիրաւ մեծ փոփոխութիւններ կրեր էին,
բարկութիւնն ի՞նչ, անուշ տիրութիւն մը
յայտրուեց էր : Աստուծոյ և կրօնից սէրը ան-
շուշտ չէր նստալ անխառն և զօրաւոր, բայց
մարդկային յանցանքն առաջնոյն պէս զայրոյթ
չէին պատճառեր . մինչ երբեմն զանոնք
խտախ կը դատապարտէր, այժմ աստուածային
կամաց համակերպելու վարժեր էր : Վառ-
վրուռն երեւակայութիւնը՝ անդի տուած էր
իմաստասիրական խոփմանց . փոխանակ մարդ-
կային նենգութեանց և կուտոց, բնութեան
կանոնաւոր և զեղեցիկ երեւոյթքը զբաղե-
ցուցեր էին զմիտս իւր : Պէտք չէ եւս մոռնալ,
որ ուժերորդ յեղեղակիր, որ միւս եօթանց
կիսին չափ ընդարձակութիւն ունի, ակա-
նատես պատմչի երկասիրութիւն չէ (ի բաց
տեսալ կանանց վերաբերող գրուածն և ինչ
որ անցելոյ աստ անդ անդրադարձութիւնք են
և ակնարկութիւնք) : Ղեւոնդեանց նահատա-
կութենէն ի վեր ալ գոնէ տասն և վեց տարի
անցած էր, վասն որոյ կենդանի նկարագրու-
թեանց տեղը պիտի բռնէին խորհրդածու-
թիւնք :



ՄԱՐԱԲԱ ՄԾՈՒՐՆԱՅԻ*

Գ Ա Բ

Կ Ե Ղ Կ - Ա Գ Ա Բ Ա Ն Գ Ե Ղ Ո Ս

Ի Ն Զ Պ Է Ս յայտնի է, Հայոց ամենա-
նշանաւոր պատմական գրուածքներից մէկը,
այսինքն Սեբոսի պատմութիւնը՝ Հերակլ
կայսեր մասին, որը երկար ժամանակ կո-
րած էր համարվում, ներկայ դարուս 40-կան
թուականներին գտնուեց Էջմիածնի գիւնա-
կան եպիսկոպոս Շահաթեանու Զանքով :
Այդ պատմութեան սկզբում կայ երկու հա-
տուած, որոնք, ըստ երեւութին, չեն պատ-
կանում Սեբոսին և յետոյ են կցած նրան :
Այդ հատուածներից երկրորդը, որ ամփոփում
է Պարսից Սասանեանների (227—652), Հայ
Արշակունիների՝ մինչեւ Դ գարու վերջը,
ու Հոռոմ—Յունական կայսրների՝ Արեղիանո-
սից մինչեւ Հերակլ՝ ժամանակակցական ա-
ղիւսակը, պատկանում է Ժ գարից ոչ վաղ
ժամանակամիջոցին : Այդ երեւում է նրա
վերնագրից և սկզբից, որոնք խորենացու և
Ասողիկի հետքերն են կրում : Յիշեալ հա-
տուածը չէ ենթարկուելու մեր հետազոտու-
թեան. մեզ համար կարեւոր է առաջին՝
հաւանականորէն աւելի հին հատուածը, որ
պարունակում է Հայոց նախնական պատմու-
թիւնը մինչեւ Հայ Արշակունիների երեւալը :

* Առաջիկայ ընկական գրութեան համեմատ է
Հազարեան Զ'երարանի ռասոցլայպետ Գր. Խա-
ւթեանցի տպագրէն ընդարձակ հետազոտու-
թեանից՝ Հայոց վէպը Մ. Խորենացու Հայոց
պատմութեան մէջ. փորձ աղբիւրների քնն-
նադատութեան, որ յայտնաւորուեց 1896 թ. Մոս-
կուս : Տես գլոխ Բ. « Ամանանը (կամ որ
նոյնն է՝ Մարտա Մ'ժոպրեանցի) իրրեւ յետին
ժամանակի անկաւոր գրութեան » էջ 38—103 :

Ման. Թարգմ.

Այդ վերջին պատմութիւններից և իրական կամ երեւացող հակասութիւններից ոչ զերծ հատուածի հեղինակը՝ իւր յառաջարանում յայտնում է, որ ինքը մտադիր է հաղորդել « զամս և զաւուրս հինգ թագաւորացն », քաղելով այդ Մծուրնացի փրիխոսփայ Մարաբայի գրքից, որ պարունակում էր իւր մէջ Մծբնում՝ Սանատուկ թագաւորի ապարանքների աւերակներում զանաւոր զարի արձանագրութիւնը՝ յունարէն նշանագրերով։ Այդ արձանագրութիւնը պարունակում էր « զամս և զաւուրս հինգ թագաւորացն Հայոց և Պարթեւաց », Արձանագրութեան սկիզբն է. « Եւ Ազաթանգեղոս զրիշ գրեցի ի վերայ արձանիս այսօրիկ իմով ձեռամբ՝ զամս ատաղին թագաւորացն Հայոց, հրամանաւ քաղին Տրդատայ, առեալ ի դիւանէ արքայի, զոր փոքր մի և ապա յիւրում տեղւոյն ասեցես զպատմեանն »։ Յիրաւի, հասուածի վերջում զետեղուած է երկու ցուցակ Պարթեւաց և Հայոց թագաւորների, որ վերջինների շարքը անցնում է շատ հետո Տրդատի շրջանից, որի ժամանակն է իբր թէ զբռնած եղել այդ արձանագրութիւնը, այսինքն մինչև 383 թ.։ Նախաբանին հետեւում է համառօտ առասպելը աշտարակայնութեան և հակաների մասին. սոցա մէջ զօրեղանալով Տիգրանեան Բէլը, սկսեց առաջինը իշխել երկրի վերայ։ Յետոյ պատմած է այն դիմագրութեան մասին, որ ցոյց տուեց Բէլին Աբեթածին Հայկը, չը կամենալով նորան աստուած ճանաչել, նոցա ընդհարումը, որի հետեւանքն եղաւ այդ երկու հակաների պատերազմը և Բէլի սպանումը՝ հօգո նետաձիկ Հայկի ձեռքից։ Ապա հետեւում է Հայկի և նորա ժառանգների բնակութիւն հաստատելը Սարատտ երկրում, որ յետոյ Հայք (Հայաստան) է կոչուում։ Հայկին սիմեանց յաջորդող սերունդները սոցա ենս Սրամանեան, Արամայիս, Ամասիա՝ Արամայիւր քաղաք հիմնողը, Գեղամ, Հարմա, Արամ, Արայ Գեղեցիկ, որը իր անունով կոչեց Արարատ դաշտաւայրը։ Դուցա մասին հեղինակը խօսում է համառօտ և միայն վերջինի՝ Արայի մասին, աւելի ընդարձակ տեղեկութիւնները տալով Եւսիւ-

րամի, նրա դէպ ի Հայոց նախապետը ունեցած սիրային յարաբերութիւնների վերայ, որոնք վերջացան Արայի սպանմամբ և Հայաստանը Ասորեստանոց տիրապետութեան ներքոյ ընկնելով՝ մինչև Սենեքերիմը։ Այս վերջինի մահից յետոյ Հայերը ապստամբեցին Ասորեստանի դէմ, և երկիրը սկսեց կառավարել կորովի Զարհը՝ Արամանեակի տոհմից։ Սորան և մէկը միւսի յետեւից ժառանգարար յաջորդեցին՝ Արմոզ, Սարսուզ, Շաւաշ, Փառնաւազ՝ մինչև Նարոզգոռնոսորը, որին՝ այս վերջինս հպատակուեց։ Հասուածի հեղինակը անցողակի խօսում է և Փառնաւազի սերունդի մասին, յիշելով նորա որդոց՝ Բազամի և Բազարատի անունները։ Վերջինը ծնում է Բիւրատին, իսկ սա՝ Ապատին։ « Որդիքն Բազարատայ, ասում է հեղինակը, ժառանգեցին զժառանգութիւնս իւրեանց ի կողմանց արեւմտից, այսինքն է Անգեղ ասն. վասն զի կոչեցաւ Բազարատ և Անգեղ, զոր ի ժամանակին յայնմիկ ազգ բարբարոսացն աստուած կոչեցին »։

Յետոյ Հայերի վերայ տիրեցին Բարեւացոց, Մարաց (և Պարսից) թագաւորները՝ մինչև Աղեքսանդր Մակեդոնացին, որ « զսմենայն տիեզերս հնազանդեցոյց ի ծառայութիւն », և Այստեղ իսկ համառօտ պատմած է Աբրահամի աղախին՝ Մարեանիկի (Մասեկ) Հայաստան գաղթելու և նորա սերնդի մասին նոյն երկրում։ Յետոյ նոր զուռն է սկսվում « Ապստամբութիւն Պարթեւաց », ուր հեղինակը պատմում է Թեոտայացոց թագաւորի որդի՝ Արշակի ապստամբութիւնը Անտիոքոս Թէոսի թագաւորութեան ժամկէտում, նորա թագաւորանալը արքայական Բաշ քաղաքում՝ Քուշանաց երկրում։ Սուրանից յետոյ գալիս է Արշակի պատերազմը Սելեւկիացոց թագաւորների դէմ, որոնցից Պարթեւաց թագաւորը զերի վարեց Դեմետրիոսին, իսկ նորա եղբայր Անտիոքոսին սպանեց Բաբելոնում։

Այս փառաւոր յաղթութիւններից յետոյ, Արշակ Մեծն՝ իր կեանքի 129-դ տարում և իր մահից մէկ տարի առաջ, թագաւոր է կարգում Հայոց վերայ իր սրդի Արշակ փո-

քրին՝ Մծբին քաղաքը նորա բաժին առաւով .
 « ՂԱՐԱՍԱՍԻԱՆ առ երկրաւ Տաճկաց, և առ
 երկրաւ Ասորաց. և զկապուսկեայ առ Կիւ-
 դիկեա՝ մինչև ցեղր ծովուն մեծի արեւմտից .
 և ցհիւսիսոյ կողմանէ ի խառն մեծ Կովկաս », :
 Նա ուղարկում է իւր որդուն մեծ զօրքով
 և նախարարների ուղեկցութեամբ Մրժանից
 արեւմուտք : Այստեղ Արշակ Փոքրի առաջն
 է ելնում մեծամեծ ընծաներով անուանի
 իշխան Բագարատ փառազեան՝ Արամանեակի
 տոհմից, պատկում է նորա զուխը թագով,
 և նստեցնում ռսկեայ զահի վերայ, իսկ
 յետոյ տալիս է նորան կնւթեան իր զուտորը :
 Արշակը նշանակում է Բագարատին Հայոց
 երկրի Ասպետ, « որ էր իշխան և հրամա-
 նատար ամենայն թագաւորութեան, հրա-
 մանաց զլուխ և հայր արքայի և եղբայր .
 որում ետ իշխանութիւն աւերութեան այնու-
 րիկ », : Նա կոտորում է հականերին, որոնք
 զօրածողով եղան նորա զէմ Ասորաց Մի-
 ջագեթում :

Մեծն Արշակ չորս որդի ուներ : Նոցա-
 նից մէկը, ինչպէս ասում են, Թագաւո-
 րանում է Թեոսալացուց աշխարհում, եր-
 կրորդը՝ Կիլիկիայում, երրորդը՝ Պարթեաց
 վերայ, իսկ չորրորդը՝ Հայաստան աշխար-
 հում : « Իշ լինին ամենայն ամբ Արշակայ
 կենաց իւրոց ձև (130), և Թագաւորաց
 ամս յիսուն և վեց », (մի ուրիշ ցուցակով՝
 130 տարի նա միայն Թագաւորել է) :

Այս հետեւում են երկու ցուցակ Պար-
 թեաց և Հայոց Արշակունիների, որոնցից
 առաջինը վերջանում է Արտաւանայ (226 թ.),
 իսկ երկրորդը՝ Արշակի որդի Պապով (մօտ
 330 թ.) :

Այս յիշատակարանի մասին, սկսած 40-
 կան թուականներից մինչև մեր օրերը,
 գիտնականները շատ զանազան կարծիքներ
 են յայտնել :

Դոցանից առաջինը ակադեմիկոս Բրոսսէն
 է, որ, ծանօթանալով այդ գրուածքի հետ՝
 երբ գիտ նա ապագրուած չէր, այն կարծի-
 քը յայտնեց, թէ դա քաղուածք է Մովսէս

Խորենացու պատմութիւնից (3-e Rapport
 sur un voyage archéologique dans la
 Géorgie et dans l'Arménie, 1849, թ.
 49-55) .

Միհրդատեանը, որին մենք պարսկան
 ենք Սեբիոսի բնագրի առաջին հրատարա-
 կութեամբ, կարծում էր, թէ « արձանագրու-
 թիւնը », իսկապէս պատկանում է Դ զարու
 Ալաթանգեղոսին . այդ արձանագրութիւնը
 ձեռք է բերել Մարաթա փիլիսոփան և Թարգ-
 մանել է հայերէն՝ յունարէնից կամ ասորե-
 րէնից, իսկ Սեբիոսը գտել է Միջագետքում .
 թէ նա հասել է մեզ ոչ ամբողջութեամբ .
 թէ Ալաթանգեղոսը չէ տեսել Մար-Աբաս
 Կատինայի պատմութիւնը, սրի մասին յիշում
 է խորենացին, և թէ՛ վերջապէս, այդ յի-
 շատակարանը կարող է ամենալաւ ապացոյց
 համարուել Մովսէս Խորենացու ճշմարտասո-
 րութեան, որը կապածի էր ենթարկուել եւրո-
 պացի գիտնականների կողմից . (սեւ Յաւաչ .
 էջ ա-ԺԷ և Ժանթթ . էջ 15-26, Ա.
 տպագր. Սեբիոսի) :

Հանգուցեալ հայագէտ Էմինը « Մեծն
 Վարդանի », ռուսերէն թարգմանութեան ծա-
 նօթութիւնների մէջ (Մոսկուա, 1861, էջ
 54-57) անցողակի այն միտքն է յայտնում,
 թէ այն գրուածքը, որ առաջին հայ Արշա-
 կունի Թագաւորների հարցում հակառուծ է
 Մովսէս Խորենացուն, պատկանում է Սե-
 բիոսին :

Մեր հետազոտութեան ենթարկուած Հա-
 սուածի Ֆրանսիացի թարգմանիչ Լանդուան
 (Coll. des histor. de l'Arménie, T. I.)
 յայտնում է իր կարծիքը անվճողաբար . նա
 մերթ խոստովանում է, թէ « Կեղծ Ագա-
 թանգեղոսը », (այդպէս է անուանում նա
 Անանուն հասուածի հեղինակին) իւր աղելը
 ուներ Մար-Աբաս Կատինայի բնագիրը, և
 ասելի մանրամասնութիւն է պատմում այն՝ ինչ
 որ Մովսէս Խորենացին միայն համարուում
 էր . մերթ նա ընդունում է, թէ Անանունը
 ապրել է Մ. Խորենացուց յետոյ, և այդ վեր-
 ջինի առասպելական պատմութիւնը մշակել է
 ինքնօրէն՝ իւր աւանդածը ասելի հետաքրքրա-
 կան անելու նպատակով :

Հանգուցեալ պրոֆէսոր Պատկանեանը իր

հետազոտութիւնների, մէջ մի քանի անգամ վերադարձել է այս խնդրին։ Սերիոսի ռուսերէն թարգմանութեան յառաջաբանում (1862, էջ ԳԺ), նա հիմնաւոր կերպով ապացուցածն էր, թէ Անանունի երկը, կամ՝ որ նոյն է, «Պատմութիւն ի Հերակլն», գրուածքի Ա. Դպրութիւնը չէ պատկանում Սերիոսին, թէ նա Մովսէս Խորենացու պատմութիւնը չէ քաղուած, ինչպէս ենթադրում էր Յրոստէն, և թէ, վերջապէս, նորա մէջ պարունակուող «արձանագրութիւնը», և այլ պատմական աւանդութիւնները ծանօթ էին Խորենացուն, որը սակայն չը գետնիցից նուցա իւր պատմութեան մէջ, որովհետեւ նորա հակասում էին իւր կարծիքին և հայեացքին յայտնի անցքերի վերայ։ Բաց ի զորանից՝ թարգմանիչը այն միտքն է յայտնում, թէ մեզ հետաքրքրող հատուածը աղաւաղուած է հասել մեզ նորա մէջ կան պակաս և անհասկանալի տեղեր։

Աւելի ուշ՝ 1875 թ., «Վանի արձանագրութիւնների», մէջ (էջ 66-68), Պատկանանը կերպարանափոխեց իւր հայեացքը Անանունի հատուածի վերայ. նա եկաւ այն եզրակացութեան, թէ Սերիոսի Առաջին Դպրութեան «Մարաբբա Մծուրնացին», և Խորենացու «Մար-Աբաս Կատրնան», նոյն և մի անձնաւորութիւնն են։ Անկախ այս կարծիքից՝ նոյնը մի տարուց յետոյ՝ փոքր ինչ փոփոխուած, յայտնեց համբաւաւոր գերմանացի քննադատ Գուտշիլդիւր։ Երկու ասորի գիտնականների նոյն և մի անձնաւորութիւն լինելը, Պատկանանի կարծիքով, բացարձակ էր այսպէս. «Մար-Աբասը (Մծուրնացին) կամ ուր ծածկուած է նորա անուան տակ՝ Գ. դարու գիտնական ասորին՝ պատահմամբ ներկայ է գտնուել Սերիոսի յիշած ապարանքը պեղելու ժամանակ, և ընդօրինակել է այն արձանագրութիւնը, որ պարունակում էր Հայոց առասպելական պատմութիւնը։ Արձանագրութիւնը տարածուեց հունական օրինակներով, որոնցից մէկը ընկաւ նաեւ Սերիոսի ձեռքը։ Բայց այդ նոյն արձանագրութիւնը առաջին անգամ տեղիք տուեց Մար-Աբասին (Մծուրնացի) կապելու մի կեղծ, բայց աւելի ընդարձակ և ամփոփ

հայկական պատմութիւն (Մար-Աբաս Կատրնայի)՝ «որը և ընկաւ յետոյ Մովսէս Խորենացու ձեռքը»։

Վերջապէս, իւր խիճերը հայկական բաւարարանի համար աշխատութեան մէջ (Ռ, 1885, էջ 62) Պատկանեանը յայտնում է, որ Գուտշիլդիւր այդ հարցին վերաբերեալ եզրակացութիւնները նա ընդունում է պայմանաւորապէս, չորոշելով սակայն, որոնք են այդ պայմանները։

Այդ հարցի մասին աւելի խիստ ու որոշ կերպով արտայայտեց իւր կարծիքը Գուտշիլդը իւր „*Ueber die Glaubwürdigkeit des armenischen Geschichte des M. von Khoren*“ (1876) հետազոտութեան մէջ։ Գիտնական հեղինակը ի նկատ է առնում այն հանգամանքը, թէ, չը նայած Անանունի Խորենացու հետ ունեցած զարմանալի նմանութեանը (Հայոց սկզբնական պատմութեան մէջ), շատ կէտերում նկատում են և խոշոր տարբերութիւններ, որոնք առաջացել են ոչ թէ պատահմամբ, այլ, կարծես, գիտամբ լինին մոծուած։ Գուտշիլդիւր կարծիքով՝ նոյն ինքն Խորենացին է հեղինակ Անանուն հատուածի, որը ծառայել է նորան որպէս առաջին նախադիւ (den ersten Entwurf), և որը Մովսէսը մշակել է և ինքնօրէն կատարեալագործել, մասամբ, յիշուած, ուղղելով նախկին սխալները, մասամբ նորա մէջ դեռ ցրուցած երեւացող հնարուածքներից հիստելով վսեմ առասպելների մի շարք։

Իսկ այսպէս, գերմանացի քննադատի խօսքերից հետեւում է, որ Անանունի յիշած «արձանագրութիւնը», հնարած է, ինչպէս և Ալաթանգեղոսի հեղինակութիւնը՝ կեղծած «Նոյնպէս» չէ եղել երբեք ոչ Մար-Աբա Մծուրնացի է ոչ նորա գրուածքը (Լ. Ե. էջ 33 և յաջորդ.)։ Սակայն, զեռ Գուտշիլդից առաջ պրոֆ. Հիւբշմանն („*Zur Geschichte Armeniens und der ersten Kriege der Araber*“, 1875, էջ 4) անցողակի նկատել է, որ մեզ հետաքրքրող և՛ նորա կարծիքով՝ Սերիոսին չը պատկանող հատուածը յենալում է մի աղբիւրի վերայ, որը, հաւանականօրէն, մոտացածին է։

Անանուի մասին եւս աւելի աննպաստ էին խօսում՝ վիրհնայի գիտնական Միխիթարեան հ. Յովսէփ Գաթրճեան իր ձեռագիր աշխատութիւններից մէկում (տես Հանգէ 1893, Գ էջ 75) և Հայոց Փննական պատմութեան հեղինակ՝ Գարապաշեանը . այդ գործը նորա անուանում էին անվաւեր գրութիւն և կոպիտ պագիտա (կրկան գրութիւն), որը կազմուած է է դարում : Այս ասելով՝ նոքա անկասկած յիշեալ գործը քաղաւածք էին համարում Մովսէս խորեանցու Պատմութիւնից :

Վերջին տարիներում սկսեցին երեւան դալ Տիւրիսկէնի աստուածաբանութեան պրոֆէսոր Ֆէթիթի քննադատական յօդուածները Մովսէս խորեանցու մասին : Նորա գեռ վերը յիշած նկատողութիւնից խորենացու Միխիթարի վկայութեան մասին երեւում է, որ նա նպատակաւոր ձգտումն ունի ղէպ ի հին հայեացքը Մար-Աբասի մասին : Նա աշխատում է ապացուցանել, որ Մովսէսը ունէր ասորի աղբիւրներ և մինչև անգամ ուղղակի ցոյց է տալիս Մար-Աբասի Գիրքը : Մի և նոյն կարծիքը նա աւելի մանրամասնորեն մշակում է իւր մի այլ յօդուածում « Մար-Աբաս Մծորնացու գրքի, վերայ », *Festgruss an R. v. Roth zum Doktor-jubiläum*, Stuttgart, 1893, էջ 84-88, գալով հետեւեալ եզրակացութեանը . « Մար-Աբասի գիրքը Մ. խորենացին չէ հնարել, այլ միայն նորից մշակել է . խորենացու ժամանակ սպրիւս է եղել ոմն ասորի հեղինակ, որի իսկական կամ կեղծ անունը եղել է Մար-Աբաս, իսկ բնակատեղին՝ Մծորն : Այդ Ասորու գիրքը, որի մէջ ենթադրելու է Պարթեւներին նպատակաւոր ուղղութեամբ գրուած մի ընդհանուր ժամանակագրութիւն, պարունակում էր Հայաստանի հնագոյն պատմութիւնը մինչև Արշակունեաց հարստութեան հիմնադրութիւնը . իւր պատմութեան բովանդակութիւնը, գոնէ Հայոց մասին, Մար-Աբաս քաղում էր ժողովրդական աւանդութիւններից, (Լ. Ը. էջ 88) :

Բաց ի գորանից, Տիւրիսկէնի պրոֆէսորի յօդուածից երեւում է, որ խորենացու յիշած Մար-Աբասը (կոստինա) և Անանու

հատուածի Մար-Աբասը (Մծորնացի) տարբեր անձինք են . բայց զորա երկուսն էլ կախումն ունին Մար-Աբասի հնագոյն խմբագրութիւնից, սրից օգտուել են Մովսէս և Անանունը՝ իւրաքանչիւր իւր կերպով : Մինչև գեռ առաջինը՝ Մովսէս, մշակում էր իւր աղբիւրի բնագիրը՝ ըստ իւր սովորութեան մտցնելով նորա մէջ և բազմաթիւ նոր մանրամասնութիւններ, երկրորդը՝ Անանունը, միայն կրճատեց այդ աղբիւրը՝ ընդհանրապէս հաւատարիմ մնալով նորան, բաց թողեց ժողովրդական աւանդութիւնները, որոնցով խորենացին՝ ընդհակառակը, օգտուեց ընդարձակօրէն * :

Այս հարցին վերաբերեալ վերջին և ու մենից մանրամասն հետազոտութիւնը լոյս տեսաւ անցեալ (1894) տարուայ հոկտեմբերին, « *Византийскій Временикъ* » հանդիսում Ն. Յ. Մառի — Հայաստանի նախնական պատմութիւնը ըստ Անանուի խորագրով : Այդ հետազոտութիւնը վերաբերում է Մ. խորենացու Հայոց պատմութեան աղբիւրների խնդրին, և պրոֆ. Կարբիէրի քննադատական յօդուածների առիթով (*Nouvelles sources de M. de Koren, Vienne, 1893*) : Ի հերքում ֆրանսիացի գիտնականի կարծեաց՝ իր թէ խորենացին և Մար-Աբաս Կաստինան մի և նոյն անձնաւորութիւնն է (*M. de Koren et généalogies patriarcales, Paris, 1894*), և թէ՛ հետեւապէս, Ասորի գիտնականի հեղինակութիւնը Հայոց

* Պ. Ֆէթիթի երկու վերոյիշեալ յօդուածները, նոյնպէս և նորա՝ վեցերի ու վեւերի « *Kirchenlexikon* »-ի 88-րդ տետրակում ղետեղած (1893, էջ 1953-1963) խորենացոյ կենսագրութիւնը, որոնք կրում են իրանց վերայ Գուաշմիզի հայեացքները, Թարգմանել է Հայերէն հ. Յ. Տաշեանը և հրատարակել Վիեննայի « *Հանգէ* » ամսագրում . սոքա լոյս տեսնոյ յետոյ և ուսանին գրքակով (1895, Ազգ. Մատենադ. ժե) Տիւրիսկէնի պրոֆէսորի Հայոց հոգեւոր դրականութեան վերաբերեալ միւս հետազոտութիւններին հետ, որոնք ղետեղուած էին *Nirschl* « *Lehrbuch der Patrologie und Patriistik* » հրատարակութեան մէջ :

պատմագիրն է հնարել, — Ն. Թ. Մառը իւր ընդարձակ հետազոտութեան մէջ աշխատում է ապացուցանել պ. Կարբէրի հայեացքի անհիմն լինելը։ Իրբեւ ապացոյց Մովսէսի յիշած ասորի արքիւրի հաստատութեան, նա ցոյց է տալիս Անանուին, որը, սակայն, հասել է մեզ “և ազաւազուած է թերաւ”, և վերջինը, Ն. Թ. Մառի կարծիքով, Հայոց պատմագրութեան ամենահին յիշատակարանն է, որի հեղինակը աչքի է ընկնում իւր անարուեստութեամբ և ճշմարտաբերութեամբ (Ն. Ը. էջ 294)։ Այսպէսով Խորենացուց առաջ, Անանունը ծառայում էր իրբեւ նախնական աղբիւր Հայոց պատմագրին, որը իր կողմից մտցրեց իւր քանի լրացումներ։

Ն. Թ. Մառի եզրակացութիւնները ամփոփուած են հետեւեալ կէտերում, որոնք հարկաւոր եմ համարում առաջ բերել ամբողջապէս (Ն. Ը. էջ 293—294)։

1. « Հայոց նախնական պատմութեան մեզ հասած հնագոյն հայերէն յիշատակարանը Անանունի երկն է. սա հիմնուած է մասամբ առասպելական նիւթերի, ինչպէս խոստովանում է ինքը հեղինակը, մասամբ հինգ թագաւորների պատմութեան վերայ, որը անվաւեր գրուածքի ծագումն ունի. ուրովհետեւ՝ համաձայնելով Անանունի հետ, թէ այդ պատմութիւնը նա ձեռք է բերել Միջագետքում ասորի փիլիսոփայի աշակերտներից, մենք նորա՝ ազարանքի աւերակներում գտնուելու մանրամասնութիւններում չենք կարող չը նկատել անվաւեր գրուածքներին յատուկ կէտեր. նոյն իսկ Ազաւազեղոսի անունն եւս մոռացածին է »։

2. « Այդ անվաւեր Ազաւազեղոսին կարելի է մերձեցնել “Հայոց զարձի”, հեղինակ համարուող Ազաւազեղոսին, եթէ ընդունինք, որ “հարձի պատմութիւնը”, առաջ չըլում էր առանց հեղինակի անուան և միայն յետոյ է վերագրուիլ Ազաւազեղոսին, վերելում պարզած թիւրիմացութեամբ (էջ 290—293) »։

3. « Անանունի գրուածքում ակնարկ անգամ չը կայ յուզուած հայրենասիրական սրտմտութեան, չէ երեւում նոյնպէս նորա ծանօթութիւնը անմիջապէս յոյն գրականու-

թեան՝ պատմագիր Մովսէս Խորենացու շերտ և բացառիկ երկրպագութեան առարկային ։ Անանունը պատում է բրբրական աւանդութիւնների և ասորի իմաստութեան ու գիտնականութեան շրջանում. մի խօսքով՝ նորա պատմութիւնը արդիւնք է այն ժամանակի, երբ Հայաստանում արիւսպետում էր ասորի քրիստոնէական քաղաքակրթութիւնը. իսկ այդ միանգամայն զուգադէպ է այն ժամանակին, որը որոշուած է ժամանակագրական աղիւսակներին կցած թագաւորների վերջին անուններով, այսինքն Գ զարու վերջովը և Ե-ի սկզբովը »։

4. « Անանունի գրուածքից յետ ժամանակի օգտուել է մի այլ անշայտ հեղինակ (տես Գ. Պատկանեան, “Վանի արձանագրութիւնները”, Ասիէէք լաւաւոր. Նոթ. 1875, յունուար, էջ 175, ծանօթ. 1), որը Ազաւազեղոսի (Մարաբայի) արձանագրութեան հետ վերցնելով ինչ ինչ նաեւ Անանունի աւելացրածից և իւրակերպ մշակելով արդէն նորա աղբիւրներում եղած մանրամասնութիւնները, լոյս ընծայեց Անանունի այդ կերպով մշակուած ամբողջ աշխատութիւնը ասորի իմաստուն Մարաբայի, կամ Մարաբառի ունեւում, և այսպէս ընկաւ անճոռնի հակասութեան մէջ, որովհետեւ առաջին Ալշակունու նախաձեռնութեամբ կազմած պատմութեան մէջ յիշած է նորա մահը և նկարագրած է նորա յաջորդ՝ Ալշակի թագաւորելը ։ Այս յիշատակարանը (կեղծ — Մարաբայ) չէ հասել մեզ առանձին »։

5. « Մովսէս Խորենացին՝ ծանօթ լինելով երկու յիշատակարաններին եւս, գերադասեց Անանունի նորագոյն աւելի տարածուած և աւելի մանրամասն մշակուած աշխատութիւնը, որը իր ժամանակ Մարաբայի հեղինակութիւնն էր համարւում, և ամբողջապէս, զեռ մի քանի իւր սեփական յաւելումներով, մտցրեց իր Հայոց պատմութեան մէջ ։ Նա պարունակում է Մ. Խորենացու Ա գիրքը Ը զլիւից սկսած և Բ գրքի առաջին ինն գլուխները »։

Թրգմ. Լ. ՆԱԶԱՐԵԱՆՑ

Շարայարեյի

